Հայտարարվում է մրցույթ՝ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սեմյոնովկայի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մաթեմատիկայի (17դասաժամ), ֆիզիկայի (4դասաժամ), ֆիզկուլտուրայի (9դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթը անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1), մեկ լուսանկար ,3×4 չափի

-բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ(դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձև 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչում հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում : Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մայիսի **3**-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը $9^{00}$-ից $15^{00}$-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա մայիսի **06**-ին՝ ժամը $13^{00}$, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սեմյոնովկա գյուղի հիմնական դպրոցում, հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ.Սեմյոնովկա, **1**-ին փողոց շենք **78:**

Տեղեկությունների համար զանգահարել՝ **(093) 26-25-31** հեռախոսահամարով: